ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Արմավիրի մարզ, Մեծամոր քաղաք, Վարչական կենտրոն, շ.4, Հեռ. 060900303 ,
info.metsamor@mta.gov.am

N **01893**
22 ապրիլ 2026 թ.

Ա/Ձ ԱՇՈՏ ԱՆՏՈՆՅԱՆ
ՏՆՕՐԵՆ
ԱՇՈՏ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Անտոնյան,

Տեղեկացնում ենք, որ Մեծամորի համայնքապետարանի և Ա/Ձ «Աշոտ Անտոնյան»-ի միջև 2026 թվականի հունվարի 21-ին կնքված թիվ ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/158 ծածկագրով ծառայության մատուցման պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում 2026 թվականի ապրիլի 20-ին ստացվել է Ձեր կողմից Մեծամորի համայնքապետարանի ղեկավարին ուղղված գրությունը, որով հայտնել եք, որ ֆինանսական խնդիրների պատճառով ցանկանում եք լուծել Ձեր և Մեծամորի համայնքապետարանի միջև կնքված պայմանագիրը: Նաև խնդրել եք նախաձեռնել համապատասխան գործընթացը՝ ապահովելով պայմանագրի լուծումը սահմանված կարգով և պայմաններով:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Պայմանագրի 5.1.-րդ կետի համաձայն՝ Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

Ղեկավարվելով Պայմանագրի վերը նշված կետերով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ «Աշոտ Անտոնյան»-ն խախտել է պայմանագրային պարտավորությունները և չի մատուցել նշված ծառայությունը, հայտնում ենք, որ 2026 թվականի ապրիլի 22-ից Մեծամորի համայնքապետարանի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծվել է:

Պայմանագիր կնքելիս Ա/Ձ «Աշոտ Անտոնյան»-ի կողմից ներկայացվել է որակավորման և պայմանագրի կատարման ապահովումներ՝ միակողմանի հաստատված տուժանքի համաձայնագրերի տեսքով:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Պայմանագիրը միակողմանի լուծվել է, ուստի պետք է ապահովվի որակավորման ապահովման՝ 1,231,200.00 (մեկ միլիոն երկու հարյուր երեսունմեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամի չափով, պայմանագրի կատարման ապահովման մասով՝ 1,000,000.00 (մեկ միլիոն) ՀՀ դրամի փոխանցումը Մեծամորի համայնքապետարանի 900335239373 հաշվեհամարին, որի վերաբերյալ տեղեկացվել է նաև Ձեր կազմակերպությանը սպասարկող «ԿՈՆՎԵՐՍԲԱՆԿ» ՓԲԸ բանկը, ուստի խնդրում ենք ապահովել վերոնշյալ գումարների փոխանցման իրականացումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ գանձումների անհնարին լինելու դեպքում Մեծամորի համայնքապետարանը այդ հանգամանքի վերաբերյալ տեղեկատվությունը՝ համապատասխան պատճառաբանված որոշմամբ, տրամադրելու է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Կատ. Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի պետ՝ Ն. Հակոբյան +37498393676